Ц. П. АГАЯН, *Вековая дружба народов Закавказья*, „Айастан", Ереван, 1972, кн. II, 406 стр.

Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության պատմության ուսումնասիրության ասպարեզում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Պ. Աղայանի կատարած երկարատև և քրտնաջան աշխատանքի առաջին պտուղը դրախոսվող մենագրության առաջին մասն էր, որտեղ հարուստ փաստական նյութի հիման վրա հեղինակը ցույց է տվել երկրամասի ժողովուրդների բարեկամությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Մենագրության երկրորդ մասը նվիրված է Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության այն էտապին, երբ նրանք համատեղ պայքար էին մղում հանուն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, երկրամասում սովետական կարգերի հաստատման և սոցիալիզմի կառուցման։

Աշխատության առաջաբանում հեղինակը կանդ է առնում ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա հոբելյանի, ՍՍՀՄ ժողովուրդների մեծ նվաճումների, սոցիալիստական ազգերի ծաղման ու զարգացման, ՍՍՀՄ խաղացած ներքին և միջազգային դերի ու նշանակության հարցերի վրա, համառոտակի թվարկում է այն գլխավոր խնդիրները, որոնց լուսաբանմանը նվիրված է դրախոսվող աշխատությունը։

«Մեծ հոկտեմբերը և ազգային հարցը» պրոբլեմը քննելիս, հեղինակը ցույց է ավել հանուն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի Անդրկովկասի բոլշևիկների ու աշխատավորական մասսաների մղած պայքարը, ինչպես նաև վեր հանել այն փաստերը, որոնք վկայում են ժողովուրդների բարեկամության զարգացման նոր էտապի սկզբնավորման մասին։ Այս կապակցությամբ նա լուսաբանել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը և ընդգծել ազգային հարցի լենինյան ծրագրի լուծման վիթխարի դերը՝ սոցիալիստական հեղափոխության հետագա զարգացման և ազգային-ազատագրական ու հեղափոխական շարժումների նոր վերելքի գործում։ Միաժամանակ հեղինակը ցույց է ավել Անդրկովկասի ժողովուրդների համար ստեղծված նպաստավոր պայմանները, երկրամասում սովետական կարգերի հաստատման նպատակով մղված պայքարի ընթացքը, մերկացրել դաշնակցական, մուսավաթական, մենշևիկյան ու հակահեղափոխական այլ կուսակցությունների, ինչպես նաև երկրամասի շահագործող դասակարգերի ու նրանց հովանավորող միջազգային իմպերիալիզմի հակասովետական քաղաքականության հակաժողովրդական բնույթը։

Դրախոսվող գրքում պատկերված է Բաքվի հերոսական կոմունան, որպես Անդրկովկասում սովետական իշխանության ու ժողովուրդների ինտերնացիոնալ միավորման դրոշակակիր, բացահայտված է նրա լեգենդար ղեկավարների՝ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Վ. Ֆիոլետովի, Մ. Ազիզբեկովի և ուրիշների գործունեությունը։ Ս. Պ. Աղայանը կարողացել է ճիշտ արտացոլել ու գնահատել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նվաճումների պահպանման համար ռուս, հայ, ադրբեջանցի, վրացի, ուկրաինացի և բազմաթիվ այլ ժողովուրդների բարեկամության ու ինտերնացիոնալ միասնության, նրանց համատեղ պայքարի բնորոշ փաստերը։

Ուշագրավ են հայ ազատագրական պայքարի առանձին դրվագների, Թուրք նվաճողների դեմ 1918—1920 թթ. հայ ժողովրդի մղած պայքարի, նրա ազգային հերոսների գործունեության, հատկապես նրանց սովետական կողմնորոշման վառ արտահայտությունների առթիվ հեղինակի տված գնահատականներն ու եզրակացությունները։ Հայ ժողովրդի կողմից Թուրք ցեղասպաններին տրված հակահարվածները հեղինակն իրավացիորեն գիտում է որպես ամբողջ երկրում սովետական իշխանության հաղթանակի համար մղած նրա պայքարի արտահայտություններից մեկը և հենց այդ առումով էլ բարձր է գնահատում նաև հայ և ադրբեջա-

նական առանձին ազգային հերոսների, ինչպես նաև ինտերնացիոնալ պարտիզանական շոկատների գործունեությունը։

Անդրադառնալով Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի հարցին, Ս. Պ. Աղայանը երկրամասի 1918—1921 թթ. քաղաքացիական պատմության ընդհանուր ֆոնի վրա շարադրում է սովետական իշխանության համար տեղի բոլշևիկյան կազմակերպությունների և աշխատավորական մասսաների մղած պայքարի սեղմ պատմությունը. տալիս Անդրկովկասի բազմազգ աշխատավորությանը ռուս ժողովրդի ցույց տված անգնահատելի օգնության լիարժեք բնութագիրը և իրավացիորեն եզրակացնում, որ սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում ընդմիշտ ամրապնդեց ժողովուրդների եղբայրական և դարավոր բարեկամությունը և նրանց միշև որակական նոր հարաբերություններ ստեղծելով՝ դրեց այդ բարեկամության նոր էտապի անսասան հիմքերը։

Առանձնապես ցայտուն են Անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի, ինչպես նաև մենշևիկյան, մուսավաթական ու դաշնակցական կառավարությունների և գերմանա-թուրքական ու անգլո-ամերիկյան ինտերվենտների տիրապետության ժամանակաշրջանում հեղափոխության և հակահեղափոխության միշև տեղի ունեցող անհաշտ պայքարի պատմությանը նվիրված էջերը։ Հեղինակը բազմակողմանիորեն բացահայտել է Անդրկովկասում նոր կյանքի կերտման համար սովետական իշխանության հաղթանակի վիթխարի նշանակությունը։ Այս կապակցությամբ վեր են հանված ու գնահատված սովետական հանրապետությունների միավորի շարժման առաջին էտապի պատմության գլխավոր իրադարձություններն ու դրվագները։

Աշխատության այս մասում զգալի տեղ է հատկացված Անդրկովկասում սովետական իշխանության վերջնական հաղթանակի, հակահեղափոխական արկածախնդրական խռովությունների ջախջախման և սովետական իշխանության առաջին քայլերի լուսաբանությանը, երկրամասի ժողովուրդների փոխհարաբերությունների ու բարեկամության նոր էտապի սկզբնավորմանը։

Բացահայտելով բուրժուական նացիոնալիզմի կատարած ռեակցիոն դերը և ընդգծելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի կարևոր նշանակությունը, հեղինակը եզրակացնում է, որ նոր կյանքի շեմին երկրամասի աշխատավորությանը սովետական հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելը դարձավ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների գաղափարական աշխատանքի գլխավոր ուղղություններից մեկը։

Մենագրության մեջ պատշաճ տեղ է հատկացված Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության հետագա ամրանպնդման պրոբլեմի ճիշտ լուծման, երկրամասի սովետական հանրապետությունների ֆեդերատիվ միության ստեղծման, գրանցում Վ. Ի. Լենինի և կոմունիստական կուսակցության խաղացած դերի լուսաբանությանը։

Հարուստ փաստական նյութի հիման վրա ցույց տալով Անդրկովկասի հանրապետությունների ֆեդերատիվ միավորման ակունքները և նրա ստեղծման համար ծավալված շարժման կարևոր դրվագները, հեղինակը բարձր է գնահատում Անդրֆեդերացիայի դերն ու նշանակությունը, այն համարելով ժողովուրդների լենինյան բարեկամության ցայտուն մարմնացում և կուսակցության ազգային քաղաքականության ճիշտ իրագործման կարևոր նվաճումներից մեկը։

Բազմաթիվ հետաքրքիր փաստաթղթերի ու տվյալների հիման վրա հեղինակն աշխատել է ցույց տալ սովետական հանրապետությունների միավորիչ շարժման երկրորդ և երրորդ էտապներում Անդրկովկասի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և ՌՍՖՍՀ ժողովուրդների քաղաքական սերտ միավորման միահամուռ ձգտումները։ Հիմնավորելով ՍՍՀՄ ստեղծման անհրաժեշտությունը և նկարագրելով այդ նպատակին ուղղված համաժողովրդական շարժման ընթացքը, հեղինակը մասնավորապես բացահայտել է նացիոնալ ուկլոնիստների և բուրժուա-ազգայնական տարրերի կողմից միավորիչ շարժման դեմ հարուցած մեքենայությունների վնասակարությունը։

Ցույց տալով ՍՍՀՄ կազմավորման լենինյան սկզբունքների և այսպես կոչված, «ավտոնոմիզացիայի» արատավոր տեսակետի արմատական հակադրությունը, հեղինակը տալիս է ՍՍՀՄ ստեղծման սեղմ պատմությունը և վեր հանում ժողովուրդների լենինյան բարեկամության վառ պատկերը, որից երևում է, թե սովետական բոլոր հանրապետություններն ինչպես էին բարեկամության, համերաշխության և համատեղ աշխատանքի ձեռք մեկնում միմյանց։ Այստեղ հեղինակը բնութագրում է ՍՍՀՄ ստեղծման միջազգային նշանակությունը, նրա դերը մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և սոցիալիզմի կառուցման գործում։ Նա միաժամանակ մերկացնում է ՍՍՀՄ-ի դեմ տրոցկիստական, աջ-օպորտունիստական ու ազգայնական տարրերի

լատարած ոտնձգությունները, ցույց տալիս ժողովուրդների բարեկամության ու նրանց սոցիալիստական ապագայի կերտման ասպարեզում դրանց խիստ վտանգավորությունը։

Աշխատության վերջին մասում Ղ. Պ. Աղայանը անդրադառնում է այն հարցերին, թե ՍՍՀՄ յուրաքանչյուր ժողովուրդները միասնական ընտանիքով, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ինչպե՞ս կառուցեցին սոցիալիզմը, ինչպե՞ս իրագործվեց սոցիալիստական տնտեսության ստեղծումը, ինչպե՞ս ամբողջ երկրում կենսագործվեցին սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասերը, ժողովուրդների բարեկամությունը և սովետական հայրենասիրությունը ինչպե՞ս դարձան մեր հասարակության առաջընթացի շարժիչ ուժերը, ի՞նչ դեր խաղացին սոցիալիստական արվեստն ու գրականությունը սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության գործում, ինչպե՞ս է նրանցում արտացոլված մեր անծայրածիր երկրի ժողովուրդների, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու նրա անշեղ զարգացումը։

Հեղինակը կարողացել է իր շոշափած բոլոր գլխավոր պրոբլեմները գիտականորեն լուսաբանել, բացահայտել դրանց քաղաքական նպատակներն ու արժեքավորել լուծման արդյունքները։

Սակայն գրախոսվող մենագրության այս մասը զերծ չէ առանձին թերություններից ու բացերից։ Համամիտ լինելով հեղինակի առաջ քաշած պրոբլեմների քննական վերլուծությանն ու գիտական եզրահանգումներին, մենք, այնուամենայնիվ, տարբեր տեսակետներ ունենք այսպես կոչված «Հայաստանի կոմունիստական կուսակցության» կամ հայկունական կազմակերպության պատմական տեղի գնահատման հարցում։ Նախ, գրախոսվող աշխատության մեջ տվյալ հարցում գերագնահատված է այդ կազմակերպության դերը։ Երկրորդ, հեղինակը գտնում է, որ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն իրավացի չէր այդ կազմակերպության գործունեության գնահատման մեջ։ Մեր կարծիքով՝ այդպիսի եզրահանգման համար անհրաժեշտ հիմքեր չկան։ «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում» այդ պրոբլեմը արդեն գտել է իր բավարար լուծումը։

Ղ. Պ. Աղայանի «Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը» մենագրության գրախոսվող հատորը գրված է գիտական պատշաճ մակարդակով, կարդացվում է հետաքրքրությամբ և որոշակի ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ։

Վ. Ն. ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր